

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն լուրագրասան մեջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարություն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարությունների համար վճարվում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

CUBAT

ԲՈՎԱՆԿԱՌՈՒԹԻՒՆ

Վաճառականությունը մեր մեջ.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայր Ալեքանդր յօթեկանի առիթով: ԲՈՎԱՆԿԱՌՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՐԱՆ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նախկին կանցլեր Բիսմարկի Թիֆլիսյան հայեր և իրանց դրացիները: Նամակ Թիֆլիսյանց: Արտաքին լուրեր.— ԽՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱՎԵՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԵՋ

II

Խոսելով մանր վաճառականների և արհեստավորների նմանապես մեր միջին դասակարգին պատկանող վաճառականների և արհեստավորների մասին, — մենք չենք կարող այստեղ չը շեշտել մի շատ նշանակալի հանգամանքի վրա, որը լուսավորված եւրոպայի նոյնանման դասակարգերի նիւթական բարոյութեան գործում առաջնակարգ դեր է խաղում և որը, դժբաղդապես, բացակայ է մեզանում: Մենք կամենում ենք խոսել արհեստավորների և միջին դասակարգին պատկանող վաճառականների կանանց դրանց մասնակցությունը մասին իրանց մարդկանց գործերում:

Կնոջ ընկերակցությունը մարդու առևտրական գործերին, եթէ առանձին նշանակություն չունի հարուստ մարդու, խոշոր կապիտալիստի համար, այդ ընկերակցությունը ահապահ նշանակություն ունի մանր դրամատերի, միջին դասակարգի առևտրականի և արհեստավորի համար... Արանք, հարուստների պես, միջոց չունեն վարձել առանձին հաշվապահներ, ծախսարարներ, գանձապահներ: Եւ կնոջ, եթէ նա գիտէ հաշվապահություն, գրապահություն անտարակոյս մեծ օգնություն կը տայ իր մարդուն նրա առևտրական ձեռնարկությունը կանոնաւոր կերպով առաջ տանելու գործում: Արհեստավորը կամ վաճառականը, մասնակցի անկողինը իր կնոջ իր գործերին, ահապահ օգնու է ստանայ, մեծ խնայողություն կունենայ, կանոնաւոր վիճակի մեջ կը դնէ իր գործը: Կնոջ զարմանալի էակ է. նա շուտով է, ծախսող է մինչև որ փողը իր ձեռքում չէ: Բայց հենց որ ինքն է վարում ստանալիցը, ինքն է ծախսում փողը, ինքն է դառնում մարդու հաշվապահ և ծախսարար, հենց որ իր ձեռքն է ընկնում փողը.— նա անմիջապէս դառնում է խնայող, նոյն իսկ ժխտ:

Ամբողջ լուսավորված եւրոպայում, մասնաւոր միջին դասակարգի արհեստավորների դասակարգում, կնոջ մարդու ընկերն է, նրա օգնականն է, նրա գանձապահն է, նրա հաշվապահն է: Գնացքը Յրանիսի, մասնաւոր Պարիզի, գնացքը Գերմանիայի, Շրայմարի, — և կը տեսնէք, որ կնոջ այդտեղ մարդու հաշվապահն է, նրա գանձապահն է, նրա ընկերն է, նրա արհեստանոցի, նրա առևտրական գործի գլխավոր նեղուկն է: Խոսակցական կնոջ, հիւրանոցի տիրոջ, ընտանիքի տիրոջ, արհեստանոցի տիրոջ կնոջ, նոյն իսկ բանտարի կնոջ պահում է մարդու հաշվապահները, նրա հաշվապահն է, նրա գանձապահն է, նրա ծախսարարն է, մինչև որ մարդը աշխատում գործողութեան, առևտրական կապիտալի վաճառումներ կայացնում կամ արդենաբերում է: Ձր մասնակցը, որ կնոջ իր մարդու ամենաձիշկ հաշվապահ կը լինի միշտ, նրա ամենահաւատարիմ գանձապահն է:

Բացի սրանից փորձված մարդիկ վկայում են որ կնոջ, առհասարակ, առանձին ձիրք ունի, առանձին ընդունակություն ունի դէպի դրամական հաշիւները, դէպի դրամական գործերի կարգին պահելն ու վարելը: Անցեալ 1889 թվին Պարիզում, իրական կոնգրեսում մեզ աջողից հետեւալ վկայություն լսել մի ֆրանսիացի արվեստից կնոջ ընդունակութեան մասին դէպի

դրամական հաշիւները, «երբ մեր գրաստանակր գալիս է մի բանուր կամ մի մանր արհեստավոր, առում էր յիշեալ արվեստը, մի որ և է գառաստանական գանդափի համար, և սկսում է բացատրել իր նիւթական վիճակը, իր գործերի էությունը, մենք, արվեստներս, մեծ մասամբ դժուարութեամբ ենք հասկանում նրա բացատրությունները իր գործի մասին. այն ժամանակ մենք ասում ենք նրան, որ կանչել այլ իր կնոջ... և ահա բանուրը կամ արհեստավորի կնոջ գալիս է և անհամեմատ աւելի պարզ կերպով է բացատրում իր մարդու բոլոր նիւթական հաշիւները, դրամական գործերի դրութիւնը...»

Սակայն մենք մասամբ շեղվեցանք մեր խնդրից. այժմ վերադառնանք մեր բուն խնդրին մեր առևտրական դասակարգի այժման վիճակին:

Մենք անցինք մեր նախընթաց յօդուածում, որ մեր վաճառականությունը պէտք է կերպարանակալի. նա պէտք է ձգտէ կապվելու երկրիս արդիւնաբերութեան հետ: Առևտրի առաջնայ նահապետական ձևը հնացել է, իսկ ինչ որ հնանում է պէտք է կերպարանակալի ժամանակակից պահանջներին համեմատ:

Ձգտելով դէպի արհեստագիտական արդիւնաբերությունը, մեր վաճառականությունը կրկին կը գտնի մի նոր, լայն և երկար դասակարգի հարստանալու: Մեր միջին դասակարգը պէտք է ջանայ դրական կերպով մրցութիւն անելու օտարազգի ուսնալու կարգի արհեստավորներին. և ճշմարիտ, ինչի չը ջանքը երկրի բոլոր արհեստները մեր ձեռքը գցելու, քանի որ դրանք են մեր ապագան, դրանք են մեր փրկությունը, դրանք են և երկրի հարստութեան աղբիւրը:

Սակայն ստեակ արհեստների մեջն է երկրի փրկությունը, երկրի ապագան. հայր պէտք է իր համար նպատակ դնէ ամբողջ երկրի բոլոր արհեստները իր ձեռքը գցելու, — այն ժամանակ նա համ ինքն կը հարստանայ, համ էլ երկրի անտեսական կեանքի տէր կը դառնայ:

Եւ որքան կը բազմանան այլ և այլ անկար պարագմուքներ, — այնքան գործը և բողոքը կը լինի ազգը, այնքան երջանիկ և ծաղկած կը լինի երկիրը: Եւ որովհետեւ հայի անտեսանալի յատկութիւնն է հարստանալուց յետոյ, այսպէս թէ այնպէս, նիւթապահ օգնել իր ազգին, ուստի յոյս պէտք է ունենանք, որ նոր ճանապարհի վրա ընթանալով և հարստութեան նոր աղբիւր իր համար գտած լինելով, հայը նոյն եռանդով կը շարունակէ նիւթապահ օժանդակել իր ազգային բոլոր հիմնարկություններին, ինչ եռանդով նա այդ անում էր և անցեալ դարերում և ներկայ դարի սկզբներում:

Ինչ և իցէ, պէտք է խոստովանվենք, որ մեր ժողովրդի բարձր դասակարգը անտարբեր է դէպի ազգային գործերը, իսկ մեր ժողովրդի ստորին դասակարգը, մեր նահապետական արհեստավորներն ու անգրագետ գիւղացիները տգետ են... Ինչ ուզում էք ստեղծել, բայց պէտք է խոստովանվենք, որ մեր ազգի միջին դասակարգը միակ դասակարգն է, որը արձագանք է տալիս մեր կեանքի բոլոր առօրեայ պահանջներին:

Այդ պատճառով, եթէ մեր միջին դասակարգը ազնիւ ճանապարհով, սովորական աշխատանքով իր անձնական ոյժով իր ձիրքը, իր մասնագիտութիւնն ու կապիտալը խելացի կերպով գործ դնելով կը հարստանայ, արդիւնաշահելով երկրիս անսպաս հարստութիւնները, — մենք հաստատ յոյս ունենք, որ նա կը շարունակէ նիւթապահ էլ օժանդակել ազգի բարոյական առաջադիմութեան գործին:

Ինչ ուզում են ասեն, բայց փաստը անուրանալի է, որ մինչև այժմ, զարերից

ի վեր, մեր միջին դասակարգն էր միշտ, որը ամեն բան պահպանում էր մեր մեջ... Ո՛վ էր ամենից շատ նուէրներ տալիս վանքերին և եկեղեցիներին, ո՛վ էր իր անգամ մակցութեամբ գլխավորապէս պահպանում թէ մեր բարեգործական և թէ մեր այլ ընկերությունները, ո՛վ էր գլխավորապէս յաճարում ազգային թատրոնը, ո՛վ էր վերջապէս իր բաժանորդագրութիւններով պահպանում մեր լրագրութիւնը, — գլխաւորապէս մեր վաճառականները, մեր ժողովրդի միջին դասակարգը: Հարկաւոր է միայն մի հայեացք գցել մեր լրագրութիւնի իր լրագրական մատենաների վրա համոզվելու համար, որ մեր բոլոր լրագրութիւնների բաժանորդների երկու երրորդական մասը կազմում են մեր վաճառականներն ու արհեստավորները:

Ուրեմն ցանկանանք, որ մեր միջին դասակարգը հարստանայ, որպէս զի համ հարստացնել երկիրը, արդիւնաշահելով երկրի բնական հարստութիւնները, համ ազգն էլ նրանից նիւթապահ օգտվի:

Որքան մեր առևտրական և արհեստավորների դասակարգը աւելի կը հարստանայ, որքան նա մտաւոր և բարոյական գիտակցութեանը կը հասնէ, — այնքան նա նիւթապահ աւելի էլ կ'օժանդակէ ազգի մտաւոր կեանքի առաջադիմութեան գործին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐ ԱԿԻՇԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ԱՌԻԹՈՎ

Մեր առաջ դրած են արտասահմանեան այն լրագրութիւնները, որոնց մեջ տպագրված են հայր Առաջ Ալեքանդր 50-ամեայ յօթեկանի նկարագրութիւնները և այդ յօթեկանի առիթով ստացված նամակները և հեռագրութիւնները: Այդ հեռագրութիւնները աչքի են ընկնում ոչ թէ իրանց շատութեամբ, այլ նրանով, որ նոքա ուղղված են առաջադրուած հայ-կաթոլիկ վարդապետին զանազան տեղերի և դասակարգերի ու դասակարգների հայերի կողմից: Ալեքանդր յօթեկանը հնորանորում են և կաթոլիկ հայը, և բողոքական հայը, և լուսաւորչական հայը, և լուսաւորչական հոգևորականութիւնը, և հայոց գործները, և երկրասարդութիւնը, և վաճառականութեան և ուրիշ զանազան շրջանների ներկայացուցիչները:

Շատ ուրախակ է միանգամայն ուսանելի երեւոյթ է, երբ մի հասարակութիւն կամ մի ազգ կարողանում է զննարան իր մտաւոր գործիչներին, երբ մի ժողովուրդ կարողանում է արժանապէս վարձատրել այն մարդկանց, որոնք իրանց ամբողջ գոյութիւնը և իրանց ամբողջ ոյժերը նուիրում են ժողովրդին, — իսկ Ալեքանդր, իր գրական-բանաստեղծական գործունէութեամբ այդ ստեակ հագուազուած մարդկանցից է:

Սակայն հայր Ալեքանդր յօթեկանի տոնակարգութեան մեջ մեզ հետաքրքրող կէտը ոչ այնքան յօթեկանի արտաքին փայլն է և ոչ էլ այն հարցը թէ ծերունի գրողը միանգամայն արժանի է հասարակութեան յարգանքներին: Այս բոլորի մեջ օրը միացան բոլոր դասակարգի պատկանող հայերը. — կաթոլիկ և լուսաւորչական, և բողոքական հայերը, նոյն իսկ այդ դասակարգի պատկանող հոգևորականները... Այդ դեռ քիչ է. հ. Առաջ Ալեքանդր յօթեկանի տոնակարգը կէտն և այն ստեակ շատ մարդիկ և գործերն, որոնք երբէք չէին ուղղւած իր և է յարգութեան յօթեկանի ուսնալ օտար դասակարգի պատկանող հայերի հետ:

Միանգամայն ձիւղ է Կ. Պոլսի հնորանի գրող Արիւրար Արիւրարեանի կարծիքը, որը նկարագրելով Ալեքանդր յօթեկանի մանրամասնութիւնը, ա-

սում է, որ այդ օրը ազգային զարգացող յաղթանակը տարաւ, և որ այդ տօնը ազգային տօն էր: Գեռ սրանից ոչ շատ տարի առաջ, երբ հայ ժողովուրդը բոլոր շրջանները խնդրված էին կրօնական նեղ զարգացումներով, երբ ոչ թէ ամբողջի, այլ նոյն իսկ մասնաւոր մեջ ահապահ ատեւութիւն և թշնամութիւն էր քարոզվում օտարադասան հայի դէմ, — այն ժամանակ գոյց է երազել անգամ չէր կարելի, որ կրօնական հաշտութեան զարգացող այնքան շուտով կը հաստանայ, որ կը դայ մի օր, երբ բոլոր հայերը կը միանան մի հայ-կաթոլիկ վարդապետի յօթեկանի օրը:

Այդ օրը հասու է խոնարհվելով այդ լայն զարգացողի առաջ, նոյն իսկ նրանք, որոնք նախածում էին կրօնական անխաբոթութիւն քարոզող մարդկանց, չը կարողանալով դիմադրել ընդհանուր հոսանքին, շտապեցին հնորանորական հեռագրութիւնը գրել, ճաշ սարքել և ուղերձներ կազմել ի պատիւ Ալեքանդրի...

Չարմանալի զուգարկութիւն: Մայիսի 6-ին տօնվեց մի մարդու գրական գործունէութեան 25-ամեակը, որը հայոց գրականութեան մեջ ամենանշանակաւոր պատկան է եղել զանազան դասակարգի ներկայացուցիչի հայերի համբաւը խոթեան զարգացումը, և ահա դրանից մի շաբաթ յետոյ առիթ է ներկայանում տօնելու մի աղաքաւան հայի յօթեկանը, որպէս զի շօշափելի կերպով տպագրուցվի, որ առաջադէմ զարգացող հասունացել է, և յաղթանակը պիտի տանի...

Գա մի յաղթութիւն է առաջադէմ բանակի համար: Գա մի գործը թայլ է դէպի առաջ: Շնորհաւորում ենք այդ թայլը...

Խ. Մ.

ԲՈՍՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐԸ

Մայիսի 5-ին Բոսսի իրարական խումբը ներկայացրեց «Բարաբաբաբաբաբա մաս», կամ «Ոճարագործի ընտանիքը» պիեսան: Այդ պիեսան Արամեանի ընկերակցութեամբ պիեսաներից է և ծանօթ է մեր հասարակութեան, ուստի նրա բովանդակութեան վրա կանգ չենք առնի:

Երբ գիշերվեց ժամը 12-ին վերջին գործողութիւնից յետոյ վարդապետը իջաւ, հասարակութիւնը մի քանի վայրկեան քարացած մնաց. կանայք լաց էին լինում. դահլիճում լսելի էր նոյն իսկ հեծկտանքը: Գա անսպասելի տպագրութեան արդիւնքն էր, որ գործեց Կորբաքո-Բոսսի իր մասով:

Կորբաքոի դերն էլ Բոսսի ներկայացում է բոլորովին այլ կերպարանակը. — նրա Կորբաքոն ամուր բնավարութիւն է, հեռու յուսահատութիւնից, կենդանի և նոյն իսկ աշխոյժ: Նրա մեջ եռու է կեանքը: Բոսսի շատ տեղ իր խաղում այնքան ոգևորվում է, որ նոյն իսկ արհեստականութեան սահմանն է անցնում, ինչպէս, օրինակ, արքայի և իր կնոջ հետ առաջին տեսակցութեան տեսարաններում: Կորբաքո-Բոսսի յուսահատութեան նշան է ցոյց տալիս միայն վերջին բոլորներին, երբ թոյնը արդէն ազդում է, և նա զգում է իր մտաւորաւ մարտը:

Այդ մասը նրան շատ ծանր է թվում, որովհետեւ նրա Բոսսիան նորից պիեսում է սրբել նրան, որովհետեւ նա իմանում է, որ կենդանի է իր աշխիւր, որին նա մտած էր կարծում: Սիրող ամուր սիրը և սիրող հայրը մոռանում է 13 տարեկան անտարակութիւնը և ինկվիզիցիայի ներկայացուցիչները կողմից իրան պատճառող վտանգը...

Բոսսի շատ ազգու պատկանող ներկայացրեց Կորբաքոի մասը. նա մեռնում է կանգնած չը պատկան իր սրբելիներով, մեռնում է հնկով ազգայ անունը, և անկարելի էր, ի հարկէ չը յուզվել, տեսնելով թէ ինչպէս այդ քաղաքացի է պէս մեռած հական անկարող եղաւ դիմանալ, և ֆիզիկապէս էլ չը մեռնէ...

Ճշմարիտ է, Բոսսի իւրով մի քանի կողմերը

հակասում են պիլեսայի պահանջներին, բայց այդ խաղը ամբողջապես վերցրած՝ ահազին ապառաչություն չեն ցուցնում:—Նա լարում է հանդիսակառնի միտքը, նա տիրապետում է հանդիսակառնի սրտի վրա:

Յունիսի 7-ին Բոսսի դուրս եկաւ Բոմբոյի դերում, Հեքսպլիբի յայտնի «Բոմբոյ և Ջուլիետտա» պիլեսայում: Այդ պիլեսայի շատերին յայտնի պիլեսա է, ուստի բովանդակութիւնը մի կողմ եկեթոյնում: Այդ օրը թատրոնը լի չէր. առաջին մի քանի կարգերը չէին բռնված: Այդ երեկոյնը, հաւանաբար, պիլեսայի քաջագործը նրանով, որ հասարակութիւնը կենդանի էր, թէ Բոսսի այնքան էլ հրաշալի չէ լինի երիտասարդ-սիրահար Բոմբոյի դերում, որ արժեքաւ մեծ փող վճարել նրան այդ դերում տեսնելու համար: Սակայն անհետաքրքրական չէր տեսնել և այն, թէ ինչպէս 62 տարեկան Բոսսի պիլեսայի ներկայացմանը ուրիշ միջնադարին սիրահարված, 18 տարեկան տաքարիւն երիտասարդը դերը:

Այդ դերը, որը թէև համապատասխան չէ տաղանդաւոր արտիստի հասակին, Բոսսի արհեստաբար տեսնելու ցանկացողները, Սիրահարված երիտասարդի հոգեկան բոլոր փոփոխութիւնները և բոլոր վայելչութիւնները Բոսսի ներկայացրեց հողեքանակաւ մեծ ճշգրտութեամբ, և ապացուցեց, որ շատ լաւ է ճանաչում և շատ հմուտ կերպով է ուսումնասիրել այն աշխարհը, որը կոչվում է «սիրոյ աշխարհ»: թէև այդ բոլորը վաղուց դադարել է զգալ...

Առաջին գործողութեան մէջ այն տեսարանը, երբ Բոմբոյ տեսնում է Ջուլիետտային, և երկրորդ գործողութեան մէջ այն տեսարանը, երբ Ջուլիետտա պատգամները խոսում է Բոմբոյի հետ, — Բոսսի ներկայացրեց մեծ կատարելութեամբ, և շատ մեծ ապագայութիւն թողեց: Լաւ էր նոյնպէս ամենավերջին մասի մտաբանումը:

Խօսելով այդ ներկայացման մասին, անկարելի է չը իշխել և Ջուլիետտայի դերը կատարող տ. Պիլիբիին, որը արդէն մի քանի անգամ, և մահաւանդ այն դերում, սրտի տուեց որ ունի մեծ շնորհ: ամենաբարձր դերերը կատարելու համար: Եթէ տ. Պիլիբի մի փոքր շուքաբի տակ է մնում, դրա պատճառը Բոսսի չէ, որի փայլը առաջ տ. Պիլիբիի նահանգում է, — արեքակի երևալով կորչում են աստղերը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԵՐ

Թէ՛ ԼՈՒՊԵՐ հայ հասարակութիւնից, վաթսուս ասորագրութեամբ ստացանք մի նորահարկան ուղերձ, Գրեթոր Արծրունու գրական 25-ամեակի առիթով: Ուղերձը ամփոփված է մի շատ զեղեցիկ, պարսկական ճաշակով շինած կազմի մէջ:

Ներքին գործերը միջնարութեան բժշկական դեպարտամենտը զանազան դեղորայքներով առաջնա անելու համար, հրամայեց արգելել ատամնաբույժներին դեղատոմսեր (քեյքստներ) գրելը, քանի որ այդ իրաւունքը տրված է, առանց բացատրութեան, միայն բժիշկներին: Ատամնաբույժների գործը զբիւր թունաւոր և աստիկ ներդրումներն ունեցող զեղեցիկ պէտք է դեղատոմսերից պահանջվեն զաւառական քաղաքներում — զաւառական կամ քաղաքային բժիշկների դեղատոմսով, իսկ նահանգական քաղաքներում — բժշկական վերահսկողների, կամ այլ բժիշկների դեղատոմսերով: Մի և նոյն դեպարտամենտը հարց է յարուցել, որ դեղաբանական գիտութեան բոլոր առարկաներից թէ՛ օրական կուրսը մտցնել պիտոյ դեղատոմսերում, դեղատոմս կառավարիչների արտասխանատուութեան և տեսչութեան ներքոյ, մի և նոյն ժամանակ դեղատոմսերի տարեկան վերահսկողութեան ժամանակ հարցաքննել դեղատոմս աշակերտներին:

Վարչական բժշկական ընկերութիւնը մի անյայտ անձից տաս հազար բուրլի նուէր է ստացել անհիտարական պահանջներով վրա ծախսելու համար:

Մոսկվայի եղբայր Պետր, Ալեկսէյ և Վասիլի Բախրուչիններ արգանումով վաճառականները, որոնց հաշուով շինված է Բախրուչինեան հիւանդանոցը, այժմ նորից 350 հազար բուրլի են նուիրել անբուժելի հիւանդների հողատարութեան համար ապաստարան կառուցանելու նպատակով: Բացի այդ, Մոսկվայում զանազան վաճառականական

Սլոբոդինիան անկեանցին կից այժմ բացվելու է և մի ապաստարան 130 անբուժելի հիւանդների համար:

«Մշակի» խմբագրի գրական գործունէութեան 25-ամեակի առիթով ստացանք մեզ ուղարկված բանաստեղծութիւն օրիորդ Թադեոսի Բարսեղ-Խեանցից, Գանձակից:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են յունիսի 5-ից հետեւալը. «Արեղակի այսօրվայ խաւարումը տեսնելի էր Շուշուց ժամը 12 և 45 րոպէ անց մինչև 3 1/2 ժամ: Երկրորդ պարզ էր, ուստի և պարզ տեսնվում էր խաւարումը: Յիշեալ ժամանակամիջոցին արեղակը մթնեց և խաւարումը իր վերջին կէտին հասած՝ արեղակի մտաւորապէս մի վեցերորդական մասը աղատ մնաց խաւարումից»:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ մարիսը արդէն գալիս է զէպի այդ կողմերը: Յունիսի 4-ին և 5-ին մորիսը ահազին քանակութեամբ անցան Շուշու մտով զէպի զանազան կողմերը: Մորիսն ուսում է ինչ որ պատահում է, արտ, խոտ, տերև և այլն: Սակայն շատ տեղեր անվնաս են մը: Նույն Արեմն այս տարի էլ զեղեցիկ պիլեսայի առաջին չքաւորութեան մէջ: Գրեթե մ ատ աղին էր են անում՝ այդ չարիքը համարելով Արեմնու պատահան...

Լուսմ եկք, որ վաղը, կիրակի, յունիսի 10-ին, թեմիս առաջնորդը ձեռնադրելու է երկու նոր քահանայներ, նրանցից մինը մի նոր-նախիջնանցի արքայու է, իսկ երկրորդը թիֆլիսի ճափի թատիկ ս. Գեորգ կեկեղեցու զպրօցի աւագ ուսուցիչ, պ. Արշակ Գլուխարի: Այդ վերջինը իր ուսումը աւարտել է Ներսիսեան զպրօցում:

Նորից պէտք է կրկինք մեր շատ անգամ արդէն կրկնած ինդիքը, այն է որ «Մշակին» թղթակցել ցանկացողները՝ պարզ և որոշ գրեն իրանց գրութեանը:

Մեզ բարոյովն անձանթ մի քանի պարոններ վերջին ժամանակ սովորութիւն են ընդունել, զաւառներից գալով՝ պատուիրել որ իրանց անունով ստացվելի նամակներն ու հեռագրները ուղարկվին «Մշակի» խմբագրութեան անունով: Խոնարհարար խնդրում ենք այդ պարոններին պատուիրել, որ իրանց անունով ուղարկվող հեռագրներն ու նամակները հասցնեն թիֆլիսի պոստատեղն յժ օրտրեօբանիա (յը պահանջ):

Լուսմ եկք, որ Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւնը այս օրերս մի խոշոր նուէր է ստացել. Արեւալից ուղարկված է ընկերութեանը 8000 բուրլի գումարը:

Գարձալ մի ուշացած նորհաւորական նամակ ստացանք «Մշակի» խմբագրի գրական գործունէութեան 25-ամեակի առիթով: Դա պ. Գալուստ Խասանիանցի նամակն է, Ալեքսանդրօպօլից:

Հայր Գևորգ Ալիշանին նրա 50 ամեայ յօբելանի առիթով ուղարկված են հետեւեալ հեռագրները. 6 հեռագիր հայոց լրագրիչներ և ամսագիրներ խմբագրութիւններից, 29 հեռագիր հոգեւորական և աշխարհական անձինքներից, 7 հեռագիր զանազան ընկերութիւններից, 43 հեռագիր զանազան հասարակութիւնների և խմբերի կողմից: Այդ հեռագիրները ուղարկված են զանազան երկրների հայերի կողմից: Բացի հեռագիրներից ստացված են եղել և զանազան նամակներ:

Ստացանք պ. Լեւոն Սարգսեանից իր «Սոց թիւրքաց Հայաստանին» ճանապարհորդական հետաքրքրական գրութեանը, որ այս օրերս լոյս է տեսել առանձին գրքով, թիֆլիսում: Այդ ճանապարհորդական յիշողութիւնները մաս մաս տպագրված են եղել «Մուրճ» ամսագրում: Գրքը, որ բաղկացած է 285 երեսից, էժան արժէ, այն է 60 կոպէկ, ուրեմն և մատչելի է ընթերցող հասարակութեան: Գրքին կցած է թիւրքաց Հայաստանի մի փոքրագիր քարտէշ:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը այս օրերս պիտի դուստի քննութեան ենթարկել իր մի զեկուցումը, որը վերաբերում է քաղաքային նոր փոխառութիւն անելուն: Փոխառութիւնը պիտի լինի 1,500,000 բուրլու: Այդ փոխառութիւնը անելու նպատակն է շինել սպանդանոց, վերջացնել նոր թատրոնի շինութիւնը, մեծացնել քաղաքային ջրանցի, կառուցանել Մուխրանեան կամուրջը և այլն:

Մեզ հարցրում են, որ վեհ. Կաթողիկոսի կօնդակի գործակալը թիֆլիսի Ներսիսեան զպրօցի, նոյնպէս և միւս հայոց սեմինարիաների վարժապետները պէտք է որոշ, օրինական ցէնդ ունենան: Նրանք, որոնք չունեն այդ ցէնդը, ուսուցչութիւն անել չեն կարող: Ուսուցչութիւն անել չեն կարող և նրանք, որոնք որ և է ուրիշ պաշտօն են վարում:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ծրագրի է կազմում նոր փոխառութիւններ անելու, և այդ փոխառութիւններն էլ պէտք է գործ դնել թատրոնների և կամուրջների վրա:—բայց հարց մեր կեղտի մէջ խրված քաղաքի մաքրութեան մասին, նա չի էլ մտածում, և առանց խղճահարկելու, առանց կարմրելու, մերժում է քաղաքի սանիտարական գործի մասին բարոյեցում, սանիտարական բժիշկներ պահելու հարցը...

Այժմ թիֆլիսում գոյութիւն ունեն երեք է ժամանակի գրագրան, ժողովրդական և մանկական ընթերցանութեան համար: Մէկը գտնվում է Միլիթայի կամուրջի վրա, և տալիս է հայերէն գրքեր, միւսը Միլիթայի փողոցի վրա, տալիս է ուսուցչական գրքեր, իսկ երրորդը Միլիթայի փողոցում է գտնվում: Անկասկած այդ գրագրանները լուսութիւն կը տան ընթերցող հասարակութեան, եթէ մի էժամանակին գրագրան էլ բացվի թիֆլիսի Հաւաքար թաղում, որը իր հեռաւորութեան պատճառով առանձին յարմարութիւններ չունի յիշեալ գրագրաններից օգուտիւ:

Լուսմ եկք, որ Լիւնուս Բոսսի մտադրութիւն ունի գնալու Կ. Պոլիս, այնտեղ մի քանի ներկայացումներ տալու համար: Թիւրքիայի մայրաքաղաքում անկասկած կը հիանան Բոսսի խաղով, բայց արդէն անարժ Ստամբուլը կը հասկանայ Եփեսոսի մեծ գաղափարները:

Լուսմ եկք, որ սեպտեմբեր ամսից թիֆլիսի Հաւաքար թաղում պէտք է բացվի կիրակեայ դպրոց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԻՆ ԿԱՆՅԱԼԻ ԲԻՍՄԱՐԿ

Մրանից մի քանի շաբաթ առաջ, երբ Բիսմարկ դեռ ևս պետական կանցլէր էր, — արդոյ Գերմանիան, նրա հետ միասին գերմանական պահպանողական մամուլը և զբանջ հետ միասին համարեա ամբողջ պահպանողական Եւրոպան, ծռակ չգրած նրա առջև, բառ չէին գտնում արտայայտելու երկաթե կանցլէրին իրանց ոգևորութիւնը, բաւականաչափ խօսք չէին գտնում գովաբանելու Բիսմարկի հանճարը, խելքը, եռանդը, հեռանկարները, քաղաքական խոհանորութիւնը, դիտարկները և այլ բաղմամբիւ կեցական յատկութիւնները:

Բիսմարկ՝ անզուգական հանճար է, Բիսմարկ՝ չը տեսնված զիպոստ է, Բիսմարկ՝ Եւրոպայի գլուխն է, Բիսմարկ՝ քաղաքականութեան զեկավարող է, Եւրոպայի բարդի որոշողը, Գերմանիայի մեծութեան հիմքը, Գերմանիայի ապագայ աշխարհական աղբիւրն է, — ահա այն գովասանքը, որ շուտով էին ամենքը Բիսմարկին:

Երկաթե կանցլէրի իւրաքանչիւր քայլովիւր, միմիկան, շարժումովիւր, ակնարկները, ձեւերը, տեսնելով, սրա-նրա հետ խօսելը, մինչև անպարտաւոր նրա տունը և շուրջ առանձին ուշադրութեան առարկայ էին, որովհետև այդ բոլորը Բիսմարկին էր վերաբերում, որի նմանը չէ եղել և գուցէ չի էլ լինի Գերմանիայի համար, ասում էին ամենքը, թէ հրապարակասունք, թէ դիպրումներ, թէ զբոյժներ, թէ զինուորականներ և այլ ամեն տեսակ մարդիկ: Եւ այն ժամանակ ամենքը ժպտում էին, և խելարկեր տեղ կը դնէին նրան, ու համարձակվելը նմանը գալ և ասել, թէ Բիսմարկ անպարտաւոր է, թէ Բիսմարկ ունի իր «եսականութիւնը» և «փառասիրութիւնը», թէ Բիսմարկ օգտակար չէ Գերմանիայի համար... Գեկորացեան փոխվեց, և այժմ Բիսմարկ այլ

ևս կանցլէր չէ, այլ քաջած իր կարածքում, արարում է իբրև մի մասնաւոր մարդ: Եւ ահա նոյն իսկ այն մարդիկ և դրոշները, որոնք մինչև այժմ խօսք չէին գտնում փառաբանելու Բիսմարկին, հայրենասիրութիւնը, անձնուրօրութիւնը և հանճարը, միանգամայն փոխվեցան, և սկսեցին ուրիշ կերպ խօսել: Գրանց լսելով, մարդ պիտի այն եղբայրացութեան դայ, որ իշխան Բիսմարկ մի և զօւրիտ է եղել, և մի խելարոյս ծերունի, որը վաղուց արդէն անպէտք է դարձել և որը վնասակար էր Գերմանիայի համար:

Եւ ամեն օր մենք Բիւրլից ստանում ենք մի կը միւսից ասելի ցուալի լուրեր: Կապրիվի շըր Քիսմարկ այժմ միմիայն մասնաւոր մարդ է, և ոչ չինչ կապ չունի երկրի քաղաքականութեան հետ, Բիւրլին ոտականութիւնը լրտեսներ է նշանակում Բիսմարկի բնակարանը լրտեսելու համար, ստորաբար ժամուր կապակածիլ անկարկներ է անում ծերունի դիպրումատի վրա, — մի խօսքով այժմ ամենքը քիչ-քիչ իրանց երեսը դարձնում են այն մարդուց, որի առջև մի քանի շաբաթ առաջ սողում էին, որին աստուածացնում, երկինք էին բարձրացնում...

Հարցնող լինի, միթէ յիւրախ Բիսմարկ փոխվեց, միթէ յիւրախ կանցլէր-Բիսմարկի ակնքան տալանդաւոր, հանճարեղ, և անձուր կանցլէր-Բիսմարկի այժմ կանցլէրութիւնից հեռանալով, դարձաւ անհմար, դատարկ, վտանգաւոր, կասկածելի... Ի հարկէ, ոչ չախկին կանցլէր Բիսմարկ այժմ նոյնն է, ինչ որ իր կանցլէրութեան ժամանակն էր: Տարբերութիւնը նրա մէջն է, որ Բիսմարկ առաջ կանցլէր էր, իսկ այժմ այլ ևս կանցլէր չէ:

Եւ հէնց ամբողջ գաղափարն էլ նրա մէջն է, որ նա այժմ կանցլէր չէ, ուրեմն ամբողջ պետական զեկավար չէ, ուստի և չունի առաջվայ մեծ ոյժը, առաջվայ անսահման իշխանութիւնը... Մարդիկ մի ժամանակ խոնարհվում էին այդ իշխանութեան, այդ մեծ ոյժի առաջ: Ստրկահողի մարդիկ ձեռնառու էին համարում շողաբոլոր, երկինք բարձրացնել նրան, որի ձեռքումն էր ամբողջ Գերմանիայի բարդը: Եւ այժմ, երբ երկեկայ կական ընկել է իր բարձրութիւնը, նոյն այդ իշխանութեան առջև խոնարհվող միլիոնաւոր մարդիկ յանկարծ փոխեցին իրանց լեղուն, և այժման իշխանութեան ներկայացուցիչներին հանձնել լինելու համար, սկսել են հաւատացնել, թէ Բիսմարկ Բիսմարկ չէ, թէ նա այն չէ, ինչ որ կարծում էր...

Եւ ահա այդ յատկութիւնն է, որ վայելցնում է նոյն իսկ Եւրոպական մամուլի, դիպրումատիայի և վարչական ներկայացուցիչների մեծ մասը:

ԹԻՒՐԻԱՍԻ ԼԱՅՆԵՐ ԵՒ ԽՍՆՑ ԴՊԱՅՆԵՐԸ

Արիւնահեղ կուխներ միշտ անպակաս են Գուրգերի և այդ Ասորիների միջև: փոխադարձ սպանութիւններ և առազակութիւններ տեղի կուհենան, որովհետև թախտիկ և խաչարած Գուրգերի ամենէն յարմար ճամբան այդ լուսնի միջոցով կանցնի և Ասորիներն ալ երբեմն կը ստիպուին լուսնի դուրս հանել իրենց ոչխարներ, այլ ծածկելու համար: Իրենց ապառաժ լուսնի բաւական արտ չունին, իրենք աղատութիւններն պաշտպանելու համար այդ լուսնի մէջ փախկում, կղզիացած կապրին և շատ աղքատ են, որովհետև մշակելի հողեր բնաւ չը կան այդ նեղ ձորերի մէջ, ուր հարկ 5—6 սոք մեծութեամբ արտեր կը գտնուին կրեկ բուսցանող, որ լուսնականներին միակ մտանդն է, ինքնին առաջ եկած խաղողին և մի քանի պտուղների հետ: Այդ լուսնի վրա միայն իրենք կրնան մազցելով ենել իշխել: այլ և կին պատերազմող են և իրենց ցեղապետների միջին կը հնազանդին: Լեզունին չին ասորիներն աղաւաղած տեսակն է և կրօնքնին ամենապարզ քրիստոնէութիւն: Իրենց հոգեւոր և մարմնաւոր պետ Մարշիմոնը կը բնակի ձուլամերկի քով զանազ կոչանիս գիւղը որ վանէն 3 օր հեռու է: Ասորիները Հայերին բարեկամն եղած են միշտ և կրօնական խորութիւն մը չը կայ մէջընդմիջ, հայ գիւղերի և քաղաքների մէջ հաստատուող Ասորին շատ շուտ կընդունի Հայոց առկարութիւնները, կը խառնուի անոնց հետ ամառանկան կապերով իբր թէ աղգային և կրօնական ու և է տարբերութիւն մը չը լինի մէջընդմիջ:

Վանի նահանգին մէջ դաշտաբնակ Ասորիները թիւը 40,000-ի կը հասնի, որոնք սխուռած են

ճիշտ չէ, հիւանդութիւնները դէպքեր բոլորովին չեն եղել և 18 հարար բուրբ էլ չէ նշանակելած եղել էպիդեմիայի դէմ մարտուելու համար:

ՄԱԳՐԻՎ, 6 յունիսի: Վարենցիայում երեկցաւ տարաբնուի հիւանդութիւն, ինչպէս նախորդում են, խօսրաւ, բայց այդ բանը պաշտօնապէս դեռ չէ հաստատուած: Էպիդեմիան անսպասելի կերպով տարածուած է, քաղաքի շրջակայքում արդէն վարակուած են 30 բնակավայրեր, գլխաւոր քաղաքներում, մասնաւոր, Միջերկրական ծովի ափերում, հրամանագրուած է ձեռք առնել նախազգուշութեան մեծ միջոցներ:

ՊԱՐԻՉ, 6 յունիսի: Կատարելութիւնը հրամայել է սպանիական սահմանադրութի վրա ստորագրական վերահսկողութիւն նշանակել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունիսի: Ներքին գործերի մինիստրը որոշեց, —արգելել «Гражданств» քաղաքի հատով ծախելը երկու շաբաթով:

ՍՕՏԻՍ, 7 յունիսի: Բողոքական կառավարիչները Կ. Պոլսի իրանց գործակալի միջոցով դիմեցին Բ. Կրան մի յայտարարով որի մէջ երանդուն, քայքայ մի և նոյն ժամանակ յարգանքով ներհնչուած ձեռքով բացատրուած են այն դժուար դրութիւնը, որն առաջ է գալիս Բ. Կրան գործելու երկարատե եղանակից, որ հրաժարուած է ձանաչել պարզինց Ֆերդինանդին: Յայտարարը պահանջում է Բ. Կրան օրինական ավակցութիւնը և վերջացում է յայտնելով, որ եթէ Բ. Կրան այս անգամ էլ բացասական կերպով կը պատասխանի, ինչպէս այդ արել է նորերս, այն ժամանակ Բողոքական

իրան ազատ կը համարի ամեն տեսակ պարտաւորութիւններից դէպի Բ. Կրան, իրան կը վերապահի գործելու ազատութիւնը և կաշխատի իր սեփական ոյժերով դուրս գալ այժմեան անորոշ դրութիւնից:

ՀՈՍՄ, 7 յունիսի: Մեծարութիւն կայ, գիւղատնտեսութեան մինիստրութեան հովանաւորութեան ներքոյ, Օրեսայում և Մոսկովայում հիննել իտալական գինիների պահեստներ, այն ձեռով ինչ ձեռով գոյութիւն ունեն Շվեյցարիայում և Գերմանիայում:

ԲՈՒԳՈՒ-ՊԵՏՏ, 7 յունիսի: Աւստրիական պատգամաւորների ընդհանուր ժողովը ձեռնարկեց գինորական բնութեան քննութեան: Իշխան Շտարնեբերգ յայտնեց, որ եթէ Աւստրիան չէ կամենում ենթարկուել ֆինանսական մասնակցութեան, պէտք է շուտով ձեռնարկի գինաւաճի լինելու գործին:

ԿՈՆՏԱՆ, 8 յունիսի: Քրիստոնեաների և մահմեդականների մէջ եղած ընդհարումները և վտանգաւոր սպանութիւնները շարունակուած են: Կղզու ափն ինչն զինուորովս զազմակալաններն ու կամաւորները: Գրութիւնը ծանր է դառնում: Միջոցներ են ձեռք առնուած անկարգութիւններին զինադրելու համար:

ՄԱԳՐԻՎ, 8 յունիսի: Խօշորան վարենցիայում չէ տարածուած Մալազայից նոյնպէս ստացուած են բարեկալով լուրեր:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, թէ քաղաքային խորհուրդը ի նկատի ունելով առաջիկայ չորս տարով (1891—1894) քաղաքային ընդհանուր ընտրութիւնները, 1890 թ. մարտի 26-ի նիստում որոշեց.

- 1) Կազմել ընտրողական ցուցակներ մինչև ներկայ տարվայ օգոստոսի 1-ը:
 - 2) Ընդհանուր անբաժան կարգաձեռքի մասնատեղերին թոյլատրել յայտնելու վարչութեանը մինչև օգոստոսի 1-ը ընդհանուր կարգաձեռք իրանց մասը ունենալու մասին, ցոյց տալով իրանց պատկանելի բաժինը: Յայտարարութիւնը եթէ իր ժամանակին չը ներկայացնեն, այն ժամանակ վարչութիւնը հաւաքած հարկը հաւասարապէս կը բաժանէ կարգաձեռքերի մէջ, եթէ յայտնի է նրանց թիւը:
 - 3) Վարչութեան կողմից պատրաստած ընտրողական ցուցակները յայտարարել ի գիտութիւն ընդհանրութեան սեպտ. 4-ին, ուղարկելով յիշեալ ցուցակները, իբրև տեղային լրագիրների յանձնարած, սրանց քաղաքային բաժանորդներին և սրանց անկախ ցուցակները հանդէս հանել խորհրդարանի դահլիճում:
 - 4) Ընտրողական ցուցակներում եղած անկանոնաւորութեան դէմ քաղաքի բնակիչների կողմից արած նկատողութիւնները ընդունել քաղաքային վարչութեան մէջ բացառապէս սեպտ. 7-ից մինչև 21 և յետ այնօրիկ ցուցակները ներկայացնել խորհրդի հաստատութեանը:
- Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը համաձայն Բարձրագոյն հաստատած քաղաքային կանոնադրութեան 17 և 22 յօդ. հրաւիրում է պ. պ. տանտեղերին, որոնք ցանկանում են մասնակցել առաջիկայ քաղաքային չորս (1891—1894) տարի ժամանակով ընդհանուր ընտրութիւններին, ներկայացնել անմիջապէս քաղաքային գանձատարանին մինչև այս տարվայ յուլիսի 31-ը իրանց կարգաձեռքի վրա մնացած գնահատութեան հարկի ապաւիկ դրամները: քաղաքային վարչութիւնը այսու յայտարարում է, թէ այն անձինք, որոնք նշանակեալ ժամանակամիջոցին լիովին չեն ներկայացնի իրանց վրա մնացած ապաւիկները, ընտրողական ցուցակների մէջ չեն նշանակվի:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 15/27 յունիսի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՅ MANEHE (ՄԱՆԷՃԷ) շոգնաւոր, նաւապետ CAUVIN (ԿՕՎԷՆ) դէպի Կ. Պոլիս, Մարսել, Հալը և Լօնդոն, մաներով և միջանկեալ նաւահանգստները:
Ազենաները ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՅԵՒԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ ԷՆԻՔԵՆՆԻՉՈՒ ԷՆԶՈՒՐԵԱՆՑ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼԴԻՈՒՍԵ:

Բ Ա Գ Ի Ո Ւ Մ
Թաւայեանցի և այլ գրավաճառանոցներում վաճառվում է ի. Մ ա լ ռ ը մ Ե ա ն ի
ՊՏՏԻ ՄՇԱԿԸ
Գիրքը
Գինն է 50 կօպէկ:
4—4

ՄԻՋՈՑ ԽԱՐԻՈՒՄԻ ԴԷՄ



ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԳԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ցախվում է 40 կօպէկով
Գեղազորական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում:
12—52 (Ծ)

ՍՏԵՓԱՆԵՆՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆՑ Ինդրում է իր բարեկամներին և ծանօթներին ներկայ լինել, Մոզուս ա. Գէորդ եկեղեցում, կիրակի, ամիս 10-ին, ժամը 11-ին, որտեղ կը կատարվի իր հանդուցեալ եղբայր ՀՄԱՅՆԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆՑԻ հոգեհանգիստը, որը վախճանվել է Աբաթուհանում, յունիսի 1-ին:
1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ
Շաբաթ, յունիսի 9-ին
ՆԵՐՐՈՆ
Ողբերգ. 5 գործ. հեղ. Պ. Կասաբ.
Ներծնի դերը կը կատարէ Բօսսի.
Կ ի ր ա կ ի, յունիսի 10-ին
ՇԵՑԼՕԿ
Կ ա մ Վ և ն Կ Ե Կ ի Կ ի Վ ա Տ ա ո ա Կ ա ն
Ողբերգ. 5 գործ. հեղ. Շեքսպիր.
Սկզբը 8 ժամին.

Մօտ օրերս կը հրատարակվի «ԱՐԱՔՍ» ՊԱՏԿԵՐԱՆԱԿԻ ՀԱՆԷՒՄԻ ՆԵՐԿԱՑ ՏԱՐՎԱՅ ԱՌԱՋԻՆ ԳԻՐԲԸ այս բովանդակութեամբ.
Հասարակական խնդիրներ, Մուշ, Տաճկահայաստանի անտեսական վիճակը, բանաստեղծութիւններ, Ստեփաննոս եպիսկոպոս Նիկիովիտի, Ասպետան Զուռ, Հայր (Վիպակ), Բէլայի շարունակութիւնը, Նորվեգացի հայադէտ Բուզգէի նոր հրատարակութեան առթիւ (Նումէն), Մովսէս Խոբենացի (Խալաթեանց), Ալլ և այլք: Արձագանք մի Մշոյ աշխարհէն:
Նկարներ. Արարատեան դաշտը, Արեւու ձորը, Բախչի-սարայ, Վարսաշայ, Մշեցի հայեր, Քուրդերի խումբ, Ստեփաննոս եպիսկոպոս Զուռ, Գիւլիգար, Խորման Հայրիկ, Սանասարեան, Էջմիածին:
Բաժանորդագիրն է 3 ռուբլի, իւրաքանչիւր գիրք արժէ 2 ռ. 50 կ.
Գինը. Петербургъ Симеону Гуламиррану.
1—2

Հանդուցեալ Բաֆֆի բարդ հեղինակութիւնների, օտար և կոչն էր ր թ արգանտներ, տղադրելու և հրատարակելու իրաւունքը ընդգրկող մի մեայն մեղ անցած և վերապահված լինելով յայտարարում ենք որ այդ հեղինակութիւններից արդէն մեքանիսները կարգադրել ենք թարգմանելու, և եթէ ցանկացողներն են դանվեն թարգմանելու կամ հրատարակելու այդ գրքերից, պայմաների մասին թող բարեհաճեն մեղ դիմելու հետեւալ հասցեով: Тифлисъ книжная торговля Макара Чилиншкова.
Մակար Չիլինսոյ
1—1

ՄԻ ԼԱԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ, Թիֆլիսում, ընդունում են աշակերտներին, որոնք կուզենային մատչելի վարձով ձաշել ընտանեկում: Նոյն ստղ պատրաստում են աշակերտներին և աշխրատչիներին միջնակարգ դպրոցների ստորին դասանիւրում արվելի հարցաքննութիւնների կրկնութիւնների համար: Հասցէն. Գանովակայա փողոց, տուն № 25, դաւթում:
Въ хорошемъ семействѣ въ Тифлисѣ, принимаютъ нахлѣбниковъ—учениковъ и готовятъ учениковъ и ученицъ низшихъ классовъ среднеучебныхъ заведеній къ переэкзаменовкамъ. Адресъ: Гановская, домъ № 25, во дворѣ.
10—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Շողենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՅ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի 4/16 ապրիլից սկսած
ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ
Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսո, և Կ. Պոլիս, հինգշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի 26 ապրիլից (մայիսի 8-ից) սկսած:
ԲԱԹՈՒՄԻՅ ՇՈԳՆԱՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ
Հինգշաբթի, 21 յունիսի (3 լուլիսի), շողենաւ ՄԻՆԳՐԷԼԻՍ, նաւապետ ԺԻՐՈՒԷՆ
— 5/17 յուլիսի — ԱՆԱՏՈՒՄ — ԳԱՐԻԳ
— 19/31 յուլիսի — ՄԻԿԱՍԻ — ԲՕՇԷԼ
— 2/14 օգոստոսի — ՄԻԳՐԷԼԻՍ — ԺԻՐՈՒԷՆ
Տեղեկութիւնների համար ձանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճ զիմել ընկերութեան ազենաներին. ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գարանիսին, Նաբերէժնայա, թիֆլիսի ՍՈՂՈՄՈՆ ԱՐՄՐՈՒՆՑ, նախկին Արժուտու գաղէկայում, № 114.
1—10 (Զ. Ե. Ե.)